

կաբար ներգործելով՝ քանի կ'երթայ անոր երազութիւնը կ'աճի կամ կը նուազի : Ի՛հա այս այն զօրութիւնն է որ երազիչ կամ դանդաղեցուցիչ կ'ըսուի ըսինք , և ամէն վայրկեան կը չափուի այն համեմատութենէն որ շարժուն մարմնոյն վրայ աւելցած կամ պակսած ամենանուազ աստիճանի երազութիւնը ունի առ այն ամենափոքր ժամանակին որուն մէջ այս երազութիւնը շարժուն մարմնոյն վրայ կ'աճի կամ կը նուազի :

Ինդհանրապէս համարելով չ երազիչ զօրութիւնը , է երազութիւնը , Տ միջոցը , թ ժամանակը , այս քանակութեանց մէջ եղած համեմատութիւնը հետեւեալ հաւասարութիւններէն կ'որոշուի

$$t = \frac{w^f}{w^d}, \quad u = \frac{w^e}{w^d},$$

որոնցմէ ջնջելով նախ թը , ետքը էը , կ'ելլէ

$$w^f = t w^e, \quad w^d = w \cdot \frac{w^f}{w^d} :$$

Իայց այս ետքի հաւասարութիւններս առջի երկուքին մէջ բովանդակուած ըլլալով , նոր որոշողութիւն մը չեն տար : Եւ չորս անորոշ քանակութիւններովս չ , Տ , է , թ , երկու հաւասարութիւն ձեռքերնիս ունենալով , աս քանակութիւններէն երկուքը գիտնալով մնացած երկուքն ալ կը գտուի : Ի՛հաւաստի ասոնք են շարժման բովանդակ տեսութեան ընդհանուր տարազները :

(ՄԱՅԱՅՈՒ ՌԻՐԻՇ ԱՆԳԱՄ)

ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԿ

Հայկ. Բազմա. Դ. :

ԱՅՍ տարի յունուարի 27ին Իգիտոր Ժէօֆ. ֆրուա Սէնդ-Իլէր անունով բնախօսը Փարիզու գիտութեան ճեմարանին թռչնոյ իրեք հաւկիթ ու քանի մը ոսկերոտիք ներկայացուց , զորոնք Ա. սլատի անունով Դաղըիայի նաւապետ մը գտեր էր

Մատակաւար կղզին : Ճամբան այս հաւկիթներէն մէկը կոտորէր է , մնացած երկուքին ալ մէկուն ծայրերը կարգէ գուրս անհաւասար կերպով ու առ իսկ մէկալը ճիշդ թերածէ է :

Հոս գնենք այս երկու հաւկիթին ալ չափը .

Հաւկիթ Դաւալ . Հաւկիթ Բեւալ

Մեծ տրամագիծ .	0", 34	0", 32
Փոքր տրամագիծ .	0", 225	0", 23
Մեծ շրջապատ .	0", 85	0", 84
Փոքր շրջապատ .	0", 71	0", 72

Իսկ կեղևին հաստութիւնն է գրեթէ 3 հազար որդամեքր :

Իզ. Ժէօֆ. ֆրուա կ'ըսէ թէ այս հաւկիթներէն իւրաքանչիւրին ընդունակութիւնը գրեթէ 8 լիտր է 1/2 է , և իրեն տարածը կը հաւասարի ջայլեման 6 հաւկիթի , քաղաք ըստած թռչնոյն 16 1/2 հաւկիթին , հաւու 148 հաւկիթի , կամ թռչնաճանճի 50,000 հաւկիթի :

Երկրայութիւն չի կայ , կ'ըսէ Իզ. Ժէօֆ. ֆրուա , թէ ասոնք թռչնոյ հաւկիթ են , ինչպէս իրենց գործուածքը կը ցուցնեն , և մէկտեղ դառնած սակերոտիքը կը վկայեն : Այս ոսկերոտեաց մէջ ա. մենէն նշանաւոր կոտորէ ձախ ուղքին ստորին ծայրը , ուսկից կ'իմացուի թէ այս թռչունը իրեք մաս ունի եղեր գէպ 'ի առաջ , և բութ չունի եղեր : Այս ոսկորը կարգէ գուրս տալիկած ու ճնշուած է , և կ'երևայ թէ այս թռչունը առաջիկայէ ըստած թռչնոց մէջ նոր ցեղ մը կը կազմէ հաւանականաբար : Իզ. Ժէօֆ. ֆրուա ասոր Էթիոպիա անունը կու տայ , որ Բաբիլոնիոն 1 ըսեւ է :

Իզ. Ժէօֆ. ֆրուա Մարկաշերուն քանի մը աւանգութիւններէն առնելով և քանի մը ճանապարհորդաց ըսածին հայելով , կը կարծէ թէ այս թռչունը Մատակաւար կղզւոյն ներսերը կեն. գանի կրնայ գտուիլ , կամ գոնէ շատ ատեն չէ որ ասոր ցեղը ջնջուեր է :

ՀԱՆԵԼՈՒԿ

ԹԻՊԵՏ անթէ է ւ՛ անփետուր ,
Քան ըզծիծառն երթայ նա սուր .
Յերկէ յերկիր երթայ թափուր ,
Դառնայ և գայ բերէ շատ հիւր :

ՅՈՒՆՈՒԱՐԻ ՀԱՆԵԼՈՒԿԵ ԻՐ ՄԿՐԱՏ :

1 Լտ . AEpyornis, որ յն . αἰπύς բարձր , և ὄρνις թռչուն բառերէն կ'ելլէ :